



Հարգելի գործընկեր,

Կորպորատիվ Կառավարման Կենտրոնը, Իրավաբանների հայկական ասոցիացիան, Երևան քաղաքի առևտրաարդյունաբերական պալատը՝ Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի (www.cipe.org) հետ համագործակցության շրջանակներում, պատիվ ունեն Ձեզ հրավիրել **«Կոռուպցիայի դեմ պայքարում բիզնեսի դերը. հայաստանյան իրականություն»** կլոր սեղանին:

Կլոր սեղանին կներկայացվեն Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի կողմից ֆինանսավորվող և հայաստանյան գործընկերների կողմից իրականացվող **«Հայաստան. հակակոռուպցիոն վարվելակերպի խրախուսումը և բարեփոխումները»** ծրագրի հիմնական նպատակներն ու բաղկացուցիչները, ինչպես նաև դրա շրջանակներում իրականացված **«Կոռուպցիայի դեմ պայքարում բիզնեսի դերը. հայաստանյան իրականություն»** հետազոտության հիմնական արդյունքները:

Կլոր սեղանին հրավիրված են մասնակցելու պետական մարմինների, երկրում գործող միջազգային կառույցների, մասնավոր ու հասարակական հատվածի, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Կլոր սեղանը տեղի կունենա ս/թ փետրվարի 15-ին, ժամը՝ 11:00-13:00-ը, **«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնի VIP սրահում** (ք. Երևան, Խորենացու 15), հետևյալ օրակարգով.

10:45 – 11:00	Կլոր սեղանի մասնակիցների գրանցում
11:00 – 11:10	Կլոր սեղանի բացում
	Բացման խոսք/«Հայաստան. հակակոռուպցիոն վարվելակերպի խրախուսումը և բարեփոխումները» ծրագրի ներկայացում Նարինե Մելիքյան, Կորպորատիվ Կառավարման Կենտրոն
11:10 – 11:25	Իրավաբանների հայկական ասոցիացիայի դերը մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարում Մարիամ Զադոյան, Իրավաբանների հայկական ասոցիացիա
11:25 – 11:40	Առևտրաարդյունաբերական պալատների դերը կոռուպցիայի դեմ պայքարում Վլադիմիր Ամիրյան, Երևան քաղաքի առևտրաարդյունաբերական պալատ
11:40 – 12:15	«Կոռուպցիայի դեմ պայքարում բիզնեսի դերը. հայաստանյան իրականություն» հետազոտության արդյունքների ներկայացում Նարինե Մելիքյան, Կորպորատիվ Կառավարման Կենտրոն
12:15 – 13:00	Հարցուպատասխան

Խնդրում ենք հաստատել Ձեր մասնակցությունը մինչև ս/թ փետրվարի 13-ը՝ զանգահարելով հետևյալ հեռախոսահամարով՝ (374 10) 546 431 կամ գրելով էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեին՝ nmelikyan@corpgov.am:

Ակնկալում և կարևորում ենք Ձեր մասնակցությունը:

Հարգանքով,

Նարինե Մելիքյան
Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի ղեկավար